

ԷՄՄԱ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆԴԻԹԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

(19-րդ դարի 2-րդ կես, Ռուսաստան, Թուրքիա)

Պետականությունից գուրև հայ ժողովրդի համար դարեր շարունակ Եկեղեցին միակ կազմակերպությունն էր, որ ուներ համազգային բնույթ և միավորում էր տարբեր տիրապետությունների տակ գտնվող հայ ժողովրդի տարանջատված հատվածները: Առանձնակի մեծ դեր է խաղացել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն իրեւ հայաբնավաճման, ազգային միասնության և հայաբնավաճման կարևոր գործունեան: Խաղամի դոգմաներով ղեկավարվող պետությունների տիրապետության ներքո գտնվող հայությունը համարվել է կրոնական համայնք, որի ղեկավարը՝ հայ հոգևորականությունը, միջնորդ օղակի դեր է կատարել տիրող պետության և հայության միջև, հաճախ իրականացրել նաև աշխարհիկ իրավասություններ: Իր գործունեության ընթացքում Հայ Եկեղեցին և հոգևորականությունը հաճախ ստացել են որոշ իրավունքներ ու արտոնություններ, համեմատական ազատություն, բայց ավելի հաճախ՝ հալածվել:

1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Քաղաքական այդ ակտին իրենց եռանդուն մասնակցությունը թերեցին նաև հոգևորականության մի շարք ականավոր գործիչներ: Ցարական կառավարությունը ցանկանում էր Հայ Եկեղեցու դիրքը ու հետինակությունն օգտագործել իր իշխանությունն Արևելյան Հայաստանում ամրապնդելու և իր ազդեցությունը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և հայկական հոծ զանգվածներ ունեցող այլ վայերի վրա տարածելու համար: Այդ նկատառումով ցարական կառավարությունը Հայ Եկեղեցու նկատմամբ դրսերում էր երկակի վերաբերմունք. Արան մի կողմից անհրաժեշտ էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը պահպաներ իր ազդեցությունը հայկական բոլոր շրջանների վրա, որպեսզի նրա միջոցով առաջ տաներ իր Արևելյան քաղաքականությունը, մյուս կողմից ցարին պետք էր, որ Հայ Եկեղեցու զլուխ կանգնած անձնավորությունը լիներ հնազանդ, իր կողմից հաստատված մեկը, որը ծառայեր ցարիզմի վարած քաղաքականությանն ինչպես սովորական շարքային աստիճանավոր: Այդ նպատակամղվածությամբ 1836-ի մարտի 11-ին վավերացվեց հատուկ հանձնաժողովի կողմից մշակված Հայ Եկեղեցու

կանոնադրությունը, որը պատմության մեջ մտավ «Պոլոյենի» անունով: 10 զիսից և 141 հոդվածից բաղկացած այդ կանոնադրությունն ավելին էր, քան Եկեղեցու կանոնադրությունը. այն իր մեջ ներառում էր ազգային կյանքի գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող խնդիրները: Դա մի կողմից ուստական կայսրության տարածքում գտնվող հայ ժողովոյի ազգային մշակութային ինքնորոշման առանձնաշնորհումների մի համակարգ էր, մյուս կողմից՝ իրավունքների սահմանափակում: Դա ամենից առաջ վերաբերում էր Ամենյան Հայոց Կաթողիկոսի ընտրության համակարգին: Ամբողջ հայության կողմից ընտրված Համազգային ժողովը (ամեն թեսմից երկու առաջ մեկ աշխարհիկ, մեկ հոգևորական) առաջադրում էր արժանավոր եպիսկոպոսների մի ցանկ, որից ընտրում էին Կաթողիկոսական երկու թեկնածու: Այստեղ սահմանափակվում էին հայության իրավունքները: Ցարը երկու թեկնածուներից մեկին տալիս էր «բարձրագույն հաստատությունը»: Իսկ այդ մեկը կարող էր լինել իր կողմից քաղաքականացն բարեհուս և նպատակահարմար անձը: Փաստորեն, կառավարությունը հնարավորություն էր ստանում Ամենյան Հայոց Կաթողիկոսի այդ բարձր պաշտօնին հաստատել իրեն ցանկալի անձնավորություն: Հայ «Պոլոյենի»-ի Հայոց Հայրապետության կայսրության սահմաններից դուրս ապրող հայության մետ կարող էր հարաբերություններ հաստատել միայն Արտաքին գործոց նախարարության միջոցով: Այդպիսով, Կաթողիկոսը կախման մեջ էր ընկնում զանազան աստիճանավորներից:

Կաթողիկոսի իշխանության սահմանափակման մի փաստ էր նաև 1837-ին ստեղծված Եկեղեցական Սինոդը, որը դեկապարվում էր ցարական կառավարության կողմից նշանակված դատախազի կողմից, չնայած նրա նախագահը կաթողիկոսն էր: «Պոլոյենի»-ի մեջ կային նաև դրական կողմեր. դա վերաբերում էր մասնավորապես կրթական գործի կազմակերպմանը, ծխական և թեմական դպրոցների, հոգևոր եւնարանի բացմանը: Հայ Եկեղեցին իրավունք էր ստանում բացել հայկական դպրոցներ, պահպանել ազգային լեզուն և ազգային-հոգևոր առանձնահատկությունները: Կառավարության հսկողության տակ գտնվող Հայ Եկեղեցին նյութական օգնություն չէր ստանում պետությունից. Արա գոյատևման միակ միջոցը ժողովրդական նվիրատվություններն էին և Եկեղեցական կալվածքներից ստացվող եկամուտները: «Պոլոյենի»-ն դժգոհությամբ ընդունվեց Եկեղեցու, հոգևորականության, ժողովրդական զանգվածների և առանձնապես արևմտահայության կողմից, այն համարվեց հայ ազգային ավանդույթները ուժնահարող և Եկեղեցու իրավունքները սահմանափակող օրենքների համակարգ: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Հայոց Հայրապետության աննահանջ պայքար սկսեցին Հայ Եկեղեցու իրավունքները վերականգնելու նպատակով: Ներսէս Աշտարակեցի, Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ Կաթողիկոսները չնայած ընտրվում էին ցարական արքունիքի հաճությամբ, սակայն չէին դադարում շամքեր գործադրել՝ Հայ Եկեղե-

ցին ազատել խորթ օենքներից և ցարական հսկողությունից, այսպես կոչված՝ հովանավորությունից, իր ավանդական դերին վերադարձնելու համար: Ներսէս Աշտարակեցուց հետո ողջ հայությունը համար հետևողականությամբ կաթողիկոս էր ընտրում միայն արևմտահայերից: Այդ ժամանակահատվածում հայության ձգուումները համընկնում էին ցարիզմի վարած արտաքին քաղաքականության հետ: Գևորգ Դ-ի ժամանակ ցարական կառավարության արտաքին քաղաքականության փոփոխություններ, սակայն, առաջացրին նոր գործելակերպ կաթողիկոսական ընտրելիների ցուցակ կազմվելու: Գևորգ Դ-ն մահացավ 1882-ին: 1882-84 թթ. ընթացքում հայ ժողովրդի բոլոր խավերն զբաղված էին կաթողիկոսական ընտրություններով: Դա սուս եկեղեցական հոգևոր ոլորտին պատկանող հարց չէր, այլ հայ ազգի և Եկեղեցու քաղաքական, հասարակական-մշակութային ինքնուրուցնության հարցը էր: Արևելահայ և արևմտահայ գործիչները միասնական պայքար էին մղում Վեհափառի թափուր գամի վրա արևմտահայ արժանավոր մի հոգևորական ընտրելու համար, որի ցարահապատակ չինելու հանգամանքը կապահովեր Հայ Եկեղեցու համեմատական ազատությունը ցարական տարբեր աստիճանավորների ուսումնագործություններից: Այդ պատճառով կաթողիկոսական ընտրության հարցները դատնում էին արևելահայ և արևմտահայ մամուլի քննարկման և քանավուների առարկա: Կաթողիկոսական ընտրության խնդիրը դառնում էր հայ ազգային-ազատագրական շարժումների լուրատեակ դրսնորումը: Թե՛ ինչ մեծ տեղ էր հատկացնում ցարական կառավարությունը հայ կաթողիկոսների ընտրությանը, ցույց են տալիս Ռուսաստանի Արտաքին քաղաքականության արխիվում մեր հայտնաբերած փաստաթղթերը¹: Ռուսաստանի Պետական քարտուղար բարոն Նիկոլային գաղտնի գրությամբ դիմում է Ներքին գործոց նախարար Ռմիտրի Տոլստոյին, որ պեսզի վերջինս Արտաքին գործոց նախարար Նիկոլայ Գիրսի, Լուսավորության նախարար Խվան Դեյվանովի, Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչապետ Ալեքսանդր Ռոմերովով-Կորսակովի և Ասիական դեպարտամենտի պետ Խվան Զինվեկի հետ հատուկ խորհրդակցությամբ քննարկեն և վճռն հայոց կաթողիկոսական ընտրությունների ամենակարևոր խնդիրները՝ կաթողիկոսական թեկնածուին արևմտահայերից առաջարելու նպատակահարմարությունը և ընտրություններին արևմտահայ պատգամավորների թվի նվազեցման հարցը²: Խորհրդակցության բոլոր մասնակիցները պարտադիր կերպով պետք է իրենց տեսակետն արտահայտեին նշված խնդիրների մկանամբ:

Կաթողիկոսի անձի նպատակահարմարության մասին խոսելիս խորհրդակցության մասնակիցներն օգտվում էին Արևմտյան Հայաստանի իրենց գործակալների բնութագրումներից: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Էրգորոմի ուսական

¹ ԱԲՊՐ, (ՌԱ.ՔԱ), Փ. Հայկական գործեր, 1882-83 թթ., գ. 101, 124, 135, 154:

² Նույն տեղում, գ. 124, էջ 82-90:

գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Դեննետի բնութագրումներն էջմիածնի թափուր գամի արևմտահայ հավանական թեկնածուների մասին: Հավանական ցուցակում նշվում են Կ.Պոլսի նախկին Պատրիարք Մկրտիչ Խրիմյանի, ժամանակի Պատրիարք Ներսես Վարժապետյանի, Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ Մեքլիսեղեկ Մուրադյանի, Էղզրումի նախկին հոգևոր առաջնորդ Հարություն Վեհապետյանի, եպիսկոպոս Իօմիրյանի անունները և պատասխանատվության մեծ զգացումով քննարկվում են ամեն մեկի անձնական և հասարակական հատկանիշները, դրական ու բացասական կողմերը, մատնանշելով ամենակարևորը՝ որքանո՞վ են նրանք համապատասխանում ցարական կառավարության քաղաքական գծին: Թվարկված հոգևորականների գոնեն երկուսի բնութագրումով կարելի է բացահայտել ցարական աստիճանավորի վերաբերմունքը: Կաթողիկոսական առաջին թեկնածուն Մկրտիչ Խրիմյանն էր, որի մասին Դեննետը մտորում էր. «Այդ անձնավորությունն աչքի է ընկնում բարոյական բարձր հատկանիշներով, օժտված է խոսքի հիասքանչ ձիրքով, բայց, լինելով բանաստեղծ, նա նեչտությամբ ենթարկվում է պոետական հրապուրանքներին: Անորյա կյանքում եպիսկոպոս Խրիմյանը, ինչպես և նման խառնվածքի անձնավորությունները, խիստ համեստ գործիչներ են: ...Մեզ համար Խրիմյանի ընտրությունը ձեռնտու չէ այն պատճառով, որ նման մտքի և խառնվածքի պատճառով, իր կարծիքով արդար գործի համար նա պատրաստ է նույնիսկ մարտիրոսանալ»³: Համեմատենք այս բնութագրումը Հարություն Վեհապետյանի մասին տրված բնութագրումն հետ. «Էղզրումի նախկին արքեպիսկոպոս Հարությունն աչքի է ընկնում առողջ դատողությամբ: Նրան խորթ են հայկական անկախության վերականգման երազային ցնորդները: Չունենալով լայն մտահորից գոն, Հարությունը պրակտիկ կյանքի հմտու գործիչ է, հենցվում է ունալ հնարավորությունների վրա և առաջնորդվում ոչ թե վերացական տեսություններով, այլ առողջ մտածողությամբ: Կաթողիկոս ընտրվելու դեպքում բոլոր թեկնածուներից մեզ համար առավել բարձր երաշխիքներ ունեցող անձնավորությունն է նա»⁴:

Ինչո՞ւ Խրիմյանը ոչ նպատակահարմար էր, իսկ Վեհապետյանը՝ հարմար կաթողիկոսական թեկնածու աչքի է զարնում ամենակարևոր հանգամանքը. «Հարությունին խորթ են հայկական անկախության վերականգման երազային ցնորդները»: Նույն հատկության համար նա զնահատվում էր նաև թուրքական կառավարության կողմից, և պատահական չէ, որ Ներսես Վարժապետյանից հետո պատրիարքական Աթոռու անցավ Բ. Դուռ համակրանքը վայելող Վեհապետյանին: Նորից դառնանք ցարական Պետական խորհրդին: Խորհրդակցության համարյա բոլոր մասնակիցները համամտի էին, որ կաթողիկոսական թեկնածուն լինի ոուսահապատակ, որովհետև նա ստիպված կընդունի արքունիքի բոլոր հրամանները: Նրանք գտնում

³ ԱՎՊՐ, ֆ. Արմանսկու գլ. 154, լ-3-10 ընդհատումներով:

⁴ Նույն տեղում, գ. 124, էջ 82:

էին, որ ոռոսահպատակը թուրքահպատակից ավելի կճզի ազգային ինքնավարության անհրականանալի գաղափարին»⁵: Այդ բոլորի մեջու միասին ընդգծվում էր, որ կարևորը ոչ թե կաթողիկոսի տարածքային պատկանելիության խնդիրն է (արևմտահայ թե արևելահայ), այլ կաթողիկոսի անձնական հատկանիշները⁶: Առավել ուշագրավը Դեմքնեսի առաջարկությունն էր՝ մշակել կաթողիկոսի ընտրության կուռ համակարգ (սիստեմ), որի դեպքում «եթեն հովանակ ընտրված կաթողիկոսի անձնական հատկանիշները լիովին չհամընկնեն մեր ցանկություններին, այնուամենայնիվ ան չկարողանա հրաժարվել այն ուղուց, որ գծել է ցարական կառավարությունն իր շահերին համապատասխան»⁷:

Խորհրդակցության քննարկման երկրորդ հարցը վերաբերում էր արևմտահայության կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու եղանակին և պատգամավորների թվին: Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Արևմտյան Հայաստանի տարածքն անհամեմատ մեծ է Արևելյան Հայաստանից, և բնակչամարար արևմտահայ թեմերը թվով ավելի շատ են Ռուսական տիրապետության տակ գտնվող Վեց թեմերից, խորհրդակցությունը որոշում է սահմանափակել արևմտահայ պատգամավորների թիվը: Թուրքիայի ոռոսական դեսպանը հրահանգ է ստանում իր հյուպատոսների և գործակալների միջոցով հավաստի տեղեկություններ հավաքել արևմտահայ թեմերի քանակի մասին, բացառել առանձին վաճեցրի եպիսկոպոս վաճահայրերին պատգամավոր ընտրելու հնարավորությունը: Այդ փաստաթղթի կարևորությունն ընդգծում է այն փաստը, որ նոր բովանդակությանը ծանոթանում է և իր համաձայնությունն է հայտնում ինքնակալ կայսր՝ Ալեքսանդր 3-րդը: Եկայսեն, 1884-ին կայացան կաթողիկոսական ընտրությունները: Հակառակ ցարական աստիճանավորների շահերին, ձայների մեծամասնությամբ կաթողիկոս ընտրվեց Ներսես Վարժապետյանը, որը հրաժարվեց կաթողիկոս օծվելուց և շուտով կնքեց իր մահկանացուն: Նորից սկսվեց կաթողիկոսական ընտրությունների թոր ու բոհը: Կաթողիկոսական թեկնածու առաջարկվեցին դարձալ Խրիմյանը, Մելքիսեդեկ Մուրադյանը և Մակար Մամիկոնյանը: Համազգային ժողովը ընտրեց վերջին երկուին: Ելեկով Ռուսաստանի քաղաքական ուղեծրից, ցարը վավերացրեց ոռոսահպատակ թեկնածուին՝ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին, որը կաթողիկոս օծվեց իբրև Մակար Թելուտցի (1885 թ.): Երկար կտնեն այն իրադարձությունների մկարագրությունները, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում և Կ. Պոլսի Ազգային ժողովում, երբ արևմտահայությունը, զայրացած ցարի վավերացումից, հրաժարվեց «ցարըննիր» Մակարին ճանաչել իբրև Ամենայն Հայոց: Ի վերջո, հայեց ողջամսությունը: Արևմտահայությունը կաթողիկոս էր առաջարկված կաթողիկոս և առաջարկված կաթողիկոս էր առաջարկված կաթողիկոս:

⁵ Նույն տեղում, էջ 85:

⁶ Նույն տեղում, գ. 154, թ. 10:

⁷ Նույն տեղում:

թյունը չէր կարող իր կապերը խզել արևելահայերից: Թվում էր, հաղթել էր ցարական կառավարության կաթողիկոսական ընտրության «կուռ համակարգը»: «Ցարըն-տիր» կաթողիկոսն իր գործունեության առաջին իսկ քայլերից չարդարացրեց ցարական արքունիքի հովսերը: Դեռ իր կաթողիկոսանալուց մեկ տարի առաջ ցարական կառավարությունը մշակել և հաստատել էր «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին» որոշումը, ըստ որի նույնիսկ հոգևոր դղյուցները պետք է ենթարկվեին լուսավորության նախարարության իրավասությանը: Նորընտիր կաթողիկոսը դեմ է արտահայտվում այդ որոշմանը և մեծ ջանքեր գործադրում ցարական կառավարության կողմից փակված հայկական դպրոցները վերաբացելու և հայ կաթողիկոսների իրավունքների վերականգնման համար: Ստացվում էր, որ հայունց ոչ թե ցարական աստիճանավորմերի ստեղծած կուռ համակարգը, այլ հայ կաթողիկոսների՝ ազգին և ժողովրդին ծառայելու հայրենասիրական, ավանդական համակարգը: Եթե «ցարընտիրն» էր դեմ դուրս գալիս կառավարության վարած քաղաքականությանը, ապա ի՞նչ ոդիք կգրավեր ժողովրդական թեկնածում՝ Մկրտիչ Խրիմլանը: Սակայն մինչ երա ընտրություններին անդրադառնալը փոխադրվենք Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստան:

1461 թ. սուլթանի հատուկ հրովարտակով օսմանյան մայրաքաղաքում ստեղծվեց հայոց պատրիարքությունը, որը միշնորդ օղակ էր կառավարության և ողջ արևմտահայության միջև: Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը պատրիարքության իրավունքներն օրենքի ուժ ստացած ավանդությունն էին: 19-րդ դարի 50-ական թվականներից մայրաքաղաքի հայ գաղթօջախի կյանքում սկսվեցին խլրտումներ: Եվլոպայում կրթություն ստացած մի խումբ երիտասարդներ, դեկավարելով մայրաքաղաքի արհեստավորների լայն ժողովրդական շարժումը, ձեռնարկեցին արևմտահայ հասարակական կյանքը վարելու համար ստեղծել մի կանոնադրություն, որն ստացավ մեծադրորդ՝ «Ազգային սահմանադրություն» անվանումը: Շարժումը հաղթությամբ պասկեց 60-ականներին: Սահմանադրական պայքարին իրենց մասնակցությունը բերեց նաև հոգևորականությունը՝ բաժանված երկու խմբի՝ կողմնակիցների և հակառակորդների: Ժամանակակից հոգևորականներից մեկն այդ մասին գրել է: «Մեծամասնություն հին եկեղեցականաց, ազնվականաց, հարստաց ընդդեմ լինելով զՍահմանադրության, կոչեցան խավարյալը, իսկ նոր եկեղեցականը, նոր ազնվականը, գիտնականը և վարժապետը, ազատ սկզբանց և Սահմանադրության հարյալը, կոչեցան լուսավորյալը»⁸: Շարժման ոգին էին Գր. Օտլանը, Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսիմյանը՝ ազատամիտ երիտասարդներ, որոնք ամիրայության և կղերականության դեմ մղած իրենց պայքարում բնավ չժըլս-

⁸ Մատեմադարան, ձեռագիր հ. 4177, թերթ 40:

տեղին Եկեղեցու գաղափարը, շանացին արժանիքներ գտնել և ստեղծել առաջադեմ հոգևորականների կերպարներ: 1854 թ. վարդապետ ձեռնադրված Խրիմյանն այդ ժամանակ գտնվում էր Կ. Պոլսում: Առաջին իսկ օրից նա համակրեց շարժմանը, մասնակցեց նրա ղեկավարների գաղափարական հավաքներին: Հակառակորդները սահմանադրությունը Երևանացրին Բ. Ռուսը՝ իբրև պետություն պետության մեջ: Այդ պատճառով էլ 1860-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրությունը երբ հանձնվեց սովորականի հաստատմանը, ամբողջ երեք տարի մնաց արքունիքում և, Նալբանդյանի դիպուկ արտահայտությամբ, «թղթատված» Սահմանադրությունը դրվեց գործողության մեջ: 1863-ին հաստատված Սահմանադրությունը նախատեսում էր սահման դնել սովորականի հաճությամբ «ընտրված», ավելի ճիշտ՝ ճշանակված պատրիարքի և ազգի ղեկը վարող հայ պետական պաշտոնյաների չարաշահումներին: Սահմանադրությունը ենթադրում էր Եկեղեցու պետերի՝ կենտրոնում պատրիարքի և գավառներում հոգևոր առաջնորդների ընտրություն՝ ժողովոյի լայն մասնակցությամբ: Սահմանադրությամբ ընտրված Ազգային Ընդհանուր ժողովն օրենսդիր մարմին էր, իսկ Քաղաքական և Կրօնական ժողով՝ պատրիարքի ղեկավարությամբ՝ Գործադիր: Պատրիարքն ընտրվում էր Ընդհանուր ժողովի կողմից: Սահմանադրությունը հավակնում էր ներկայացնել ողջ արևմտահայության շահերը, սակայն երեսփոխանների ծանրակշիռ մասը գաղթօջախի ներկայացուցիչներն էին: Փաստորեն, 200.000 հայություն ունեցող գաղթօջախը վեր էր դասվում երկու և կես միլիոն արևմտահայությունից:

Ժամանակակիցներից մեկի դիպուկ արտահայտությամբ այդ անվարձ ու անթռշակ երեսփոխանները հավաքվում էին շաբաթական մեկ անգամ, մի քանի ժամով՝ տնօրինելու ողջ արևմտահայության հոգևոր և հասարակական գործերը: Նրանք ի վիճակի չէին լուծելու նույնիսկ 200.000 հայ բնակչություն ունեցող այդ գաղթօջախի խնդիրները, ուր մնաց՝ ողջ արևմտահայության:

Մինչև 1869 թ. Կ. Պոլսի պատրիարք էին ընտրվում օսմանյան մայրաքաղաքի և ծովամերձ գաղթօջախների համեմատաբար ապահով կյանքով ապրող ներկայացուցիչները: Անտեղյակ և անհաղորդ արևմտահայության տառապանքներին՝ նրանք կիսատ-պոատ հոգում էին գաղթօջախի խնդիրները: 1869 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարքական գահին բարձրացավ պատմական Հայաստանի Վասպորական ասիանազի կենտրոն Վանի բնակիչ Վարագան Արծիվը, Տարոնի արծվիկների հայող, տարոնցիների կողմից «Հայրիկ» պատվանումին արժանացած Մկուտիչ Խրիմյանը: «Հայաստանի ցավոց պատկեր» Պատրիարքը գործունեության առաջին քայլերից շանքեր ներդրեց Սահմանադրության մեջ ուսմահարված գավառական շահերի պաշտպանության համար: Նա բարձրացրեց Սահմանադրության վերաբնության հարցը, առաջարկեց գավառահայության համար հատուկ մարմին ստեղծել, Ազգային ժողովի անդամներ ընտրել բուհ Արևմտյան Հայաստանի ներ-

կայացուցիչներին: Եվ քանի որ Արևմտյան Հայաստանը անհամեմատ մեծ էր, քան Կ. Պոլսի գաղթօջախը, ուրեմն Ազգային ժողովում պետք է գերակշռեին Օրաց կողմից ընտրված երեսփոխանձները, որոնց վիճ հենվելով նորընտիր պատրիարքը մեծամասնություն կկազմեր և Սահմանադրության մեջ կը ներունվեին գավառահայությամբ այսինքն բուն Արևմտյան Հայաստանի շահերն արտահայտող հոդվածները: Ազգային ժողովում բուն դրած էֆենդիները, սակայն, նույնիսկ չիամաձայնեցին, որ Ազգային ժողովի 140 երեսփոխանձներից գոնե կեսն ընտրվեն Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչները: Պատրիարքի ձեռնարկումները պաշտպանեցին արևմտահայ դեմոկրատական մամուլի օրգանները՝ Հակոբ Պարոնյանի դեկավարությամբ: Վերջինիս լրագիրը մի քանի անգամ փակվեց օսմանյան գրաքննության կողմից պատրիարքին պաշտպանելու համար: Տարիներ անց ընդունակություններից մեկը խոստովանեց, թե Պատրիարք Խորիմյանին զարդներց անելու համար դրամական ինչ միշտցներ է ծախտել Կ. Պոլսի էֆենդիական-ամիրայական դասը⁹: Միայն «Խորիմյանի անհողողող կամքի և անվիճակ ստիպումների շնորհիվ նույն տարվա (1872) սեպտեմբերին կազմվեց գավառների համար հատուկ Սահմանադրական հրահանգ», որտեղ մանրամասն նշվում էր, թե Սահմանադրությունն ինչպես պետք է հարմարեցվի գավառի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) պայմաններին¹⁰: Հակածողովրդական տարրերի ճաշումների տակ Մկրտիչ Խորիմյանը հրաժարական տվեց:

Թուուցին նշենք, որ արևմտահայ հոգևորականության ընտրանին 70-ականների վերջին և 80-ականներին ծավալած ազգանվեր գործունեությամբ արծարենցին հայկական հարցը Սահմանադրություն, եկրոպական պետությունների բարձրագույն աստյաններում և Բենջինի վեճածողովում՝ ներկայացնելով հայության իդեալը, շահերը, ակնկալիքները, այսինքն իրականացնելով աշխարհիկ իրավասությունները: Չնայած հետո պատմաբաններից ոմանք ծաղրանքով, բայց և ցավով նրանց առաքելությունն անվանեցին կերպական դիվանագիտություն, որովհետև դա էր իրականությունը: Տարիներ հետո, 1917-ին, Զերազը, պաշտպանելով հայ պատվիրակության ու նրա դեկավարին, գրում էր, որ Խորիմյանի չափ ոչ ոք չգիտեր Արևմտյան Հայաստանը և նրա կարիքները: Մեծ պետությունների դիվանագիտությունից դասեր քաղած Խորիմյանը 1879-ի կեսերից մինչև 1884-ի կեսերը գործունեություն ծավալեց իբրև Վասպուրականի հոգևոր առաջնորդ: Այդտեղ էլ նա հանդես էր գալիս ողջ մահանգի հայության անունից և դիմումներ հոդում Ալեքսանդր 2-րդին և 3-րդին՝ խնդրելով իրենց ձեռքը վերցնել 61-րդ հոդվածի բարենորոգումների գործը¹¹:

⁹ Մերենց, Կաթողիկոսություն և Խորիմյան: Թիֆլիս, 1884, էջ 22:

¹⁰ Թ. Ե. Գ., Խորիմյան Հայրիկ: Փարիզ, 1925, էջ 51:

¹¹ АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1568, л. 10-11, ф. Армянские дела, оп. 461, д. 119, л. 47.

80-ականի կեսերից թուրքական կառավարության աշքում քաղաքականապես անբարեհուս Խրիմյանը Բ. Դուան կողմից կանչվեց Կ. Պոլիս' մշտական հսկողության տակ պահելու նպատակով: Դա փաստացի աքտոր էր: Նովմիսկ այստեղ, դարձալ Ազգային ժողովում Խրիմյանը սատոր կանչեց ժողովրդավարական ուժերին, ընտրվեց Ազգային ժողովի երեսփոխան, կրօնական ժողովի ատենապետ, Եկեղեցական համագումար-ժողովի նախագահ: Նովմիսկ այսօրվա չափանիշներով առաջնորդվելու դեպքում, զարմանում ենք ժողովրդանվեր գործիչների այդ փաղանջի ծավալած գործունեության վրա, երբ համրդյան բոնապետության օրերին, Գում-Գաբրուի խաղաղ ցուցը գնդակոծվելուց հետո, Եկեղեցական համագումար-ժողովը Խրիմյանի ղեկավարությամբ արտակարգ համարձակ տեղեկացիր է Շերկայացմում Ազգային ժողովի քննարկմանը՝ Բ. Դուանը հանձնելու համար: Ինը բարձրաստիճան հոգևորականներից հիմքը հրաժարվեցին ստորագրել այն՝ վախենալով սովորական զայրությունը: Տեղեկագիրն ստորագրեցին համագումար-ժողովի նախագահ Խրիմյանը, Գարեգին Սրբանատյանը, Գրիգորիս Ալեքսանդր և Մատթեոս Խզմիրլյանը: Այդ փաստաթղթով համագումար-ժողովը պահանջում էր օսմանյան արքունիքից՝ շիշամտել Հայ Եկեղեցու ներքին գործերին, գրաքննության չենթարկել հոգևոր գրականությունը, չսահմանափակել Ազգային ժողովի և պատրիարքի սահմանադրությամբ ընդունված արտոնությունները, չհալածել գավառական հոգևոր առաջնորդներին, չկտրել իրենց թեմերից¹²: Տեղեկագիրը ներկայացվեց սովորական անձնական քարտուղար Սուրենա փաշային: Այդ հանդգնության համար չորս եպիսկոպոսներն էլ պատժվեցին. Խրիմյանը երկրորդ անգամ աքսորվեց, այս անգամ Երուսաղեմ ... Աքսորական Խրիմյանը Մակար Թեղուցու մահից հետո երկրորդ անգամ առաջարիվեց կաթողիկոսական ընտրելի և 1892 թ. մայիսի 5-ին դարձավ համազգային ընտրյալ: Երկրորդ թեկնածուն Մատթեոս Խզմիրլյանն էր: Ցարը վավերացրեց Խրիմյանի թեկնածությունը: Երկարատև բանակցություններ և պահանջման ուժությունը համապատասխան գերատեսչությունների միջև Խրիմյանին աքսորից ազատելու, թուրքահպատակությունից հանելու համար: Ռուսաստանի Արտաքին քաղաքականության արխիվից հայտնաբերել ենք այդ բանակցությունների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր¹³. Դրանց մեջ սովորանը համոզում էր ցարի՛ թեկանել կաթողիկոսական ընտրությունները և նոր ընտրություն սկսել, որովհետև և՛ վավերացված, և՛ երկրորդ թեկնածուն ամբարեհուս ամձնավորություններ են: Ցարը հավաստիացրեց սովորական, որ Էջմիածնում ցարական աստիճանավորի խախտ հսկողության ներքո Խրիմյանը չի համարձակվի խառնվել արևմտահայության ներքին գործերին, իսկ նրան չվավերացնելը առիթ

¹² Ատենագործությունը Ազգ. ժողով, 1890-94 թթ., էջ 64-74:

¹³ АВРР, ф. Армянские дела, д. 119, л. 5, 14.

կտա մեծ հուզումների հայության երկու հատվածներում¹⁴: Ըստրությունից միայն 17 ամիս հետո Խոհմյանն օծվեց կաթողիկոս: Նրա կաթողիկոսական շրջանը եղավ հայ ժողովրդի հերոսական և ողբերգական շրջաններից մեկը: Հայոց Հայրապետը գործի դրեց իր ողջ ուժերը՝ «Պոլոյենի»-ի ընձեռած հնարավորություններով պաշտպանելու հովանուկ արևմտահայությանը: 1895-96 թթ. կոտորածներից հետո սովորանն արգելեց արևմտահայերի Սահմանադրության կիրառությունը: Դադարեցին Ազգային ժողովի նիստերը: Այդ բոլորը սովորանի կողմից մեկնաբանվում էր իբրև Սահմանադրությունը վերաբնելու և տարբեր հոդվածներ փոփոխելու շաճքերով: Խրականում նա խոչընդոտում էր հայության երկու հատվածների հարաբերություններին: Նա հրամայել էր փոփոխության ենթարկել Սահմանադրության 60 և 61-րդ հոդվածները, ըստ որոնց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը պետք է մասնակցեին ամեն թեմից երկու պատգամավոր՝ մեկ աշխարհական և մեկ հոգևորական: Սովորանը պահանջում էր, որ թեմերի փոխարեն կաթողիկոսի ընտրությանը մասնակցի Ազգային ժողովի ընդամենը երկու ներկայացուցիչ, որոնք փաստորեն կլիմենին նրա առաջարկած անձնավորությունները¹⁵: Բ. Դուան նպատակն էր դիմակայել ոուսական ազդեցության ուժեղացմանը: Այդ հանգամանքն օգտագործելով, Վեհափառը բանակցություններ էր վարում ոուսական Արտաքին գործոց նախարարության հետ, որպեսզի խոչընդոտեն թուրքական ձգտումներին:

Վեհափառն ավելի համարձակ գործողությունների դիմեց Հայոց Եկեղեցու իրավունքները պաշտպանելու ուղղությամբ՝ այս անգամ ցարական կառավարության ուղնաձույթուններից պաշտպանելու նպատակով, 1903 թ. Խոնիսի 12-ի օրների դեմ, որով նախատեսվում էր հարքունիս գրավել Հայ Եկեղեցու շարժական և անշարժ գույքը: Հենվելով ցարիզմի կողմից հաստատված «Պոլոյենի»-ի վրա, Խոհմյանն ապացուցում էր, որ ցարական կառավարությունը ուժամբարել է իր պետության սրբազն իրավունք՝ մասնավոր սեփականության անձեռմխելությունը, խախտել Հայոց Հայրապետի բոլոր իրավունքներն ու արտօնությունները: Կաթողիկոսի բազմաթիվ դիմումներն ու բողոքները մնացին ամնենաւն՝ «Զայն բարբառ հանապատի»¹⁶: Իր թիկունքին ունենալով ազգային կուսակցությունների աջակցությունը՝ Վեհափառ Հայրապետը դիմեց անօրինակ խիզախ մի քայլի: Առ հրաման արձակեց Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր թենական առաջնորդներին՝ չենթարկվել արքայական հրամանին, ցարական աստիճանավորներին չթույլատրել ցուցակագրել Հայ Եկեղեցու ունեցվածքը: Ակնվեց համաժողովողական մի հուժեկու շարժում, որին մասնակցեցին արևմտահայության նախատիր բոլոր հասարակաշերտերը, նաև ողջ աշխարհի հայությունը: Արևելահայ ազատագրական շարժումների հետաքր-

¹⁴ Դուզմ տեղում, թ. 14:

¹⁵ ՀՀ ԿՊԴԱ, ֆ. 56, գ. 14, գ. 52, թ. 5, 8-9:

¹⁶ ՀՀ ԿՊԴԱ, ֆ. 57, գ. 299, թ. 8, գ. 56, թ. 14, գ. 73, թ. 3-34:

քիր էջերն են կազմում համաժողովրդական պայքարի այն արտահայտությունները, որոնց գլխավորողը եղավ ալեմեր կաթողիկոսը՝ պաշտպանելով իր ժողովրդի իրավունքները. Հայ Եկեղեցու անկախությունն ու ինքնուրույնությունը: Երկու տարի տևած այդ պայքարը պասկեց հայությամբ: «Ամենառորմած ցարը» 1905 թ. օգոստոսի 1-ին հրաման արձակեց՝ չեղյալ հայտարարել հումիսերեցյան օրենքը. Վերաբացվեցին հայկական դպրոցները, Հայոց Եկեղեցին համեմատական ազատություն ստացավ հոգևոր և մշակութային բնագավառում:

20-րդ դարի հայ կաթողիկոսները որդեգրում են հայունասիրական գործունեության նոյն ուղեծիրը, արդեն այլ պայմաններում: Փաստորեն հայկական նվիրապետությունները պաշտպանում էին հայության իրավունքներն ու շահերը Հայոց Եկեղեցու պաշտպանության միջոցով: Այսինքն՝ Եկեղեցին ու ժողովուրդը միասնական ամրողություն են: Պատմությունը մեզ համար Աերկայի դասն է և հիմքը. եթեն Հայոց Եկեղեցին և հայ կաթողիկոսները նման գործունեություն են ծավալել օտար պետությունների լծի տակ, այսօր Եկեղեցու և նրա Հայրապետի առաջ կանգնած են խնդիրներ, որոնք պետք է լուծվեն հայունի պետության քաղաքական այրերի մետ:

